ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան 22 դեկտեմբերի 2014թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Հ. Նազարյանի
Անդամակցությամբ՝ Վ. Հովհաննիսյանի
Ա. Պետրոսյանի

Ուսումնասիրելով քաղաքացի Անուշ Հովհաննիսյանի անհատական դիմումով
գործը քննության ընդունելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ քաղաքացի Անուշ Հովհաննիսյանը դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին, 8, 31-րդ հոդվածներին հակասող եւ անվավեր ճանաչել 2000 թվականի օգոստոսի 9-ի ՀՀ մաքսային օրենսգրքի մինչեւ 05.12.2012թ.-ը եղած եւ գործող խմբագրությամբ 95 հոդվածի 1-ին մասի, 86 հոդվածի, 128 հոդվածի 1-ին մասի, 134 հոդվածի եւ 96 հոդվածի 2-րդ մասի նորմերը»:

1. Դիմողը գտնում է, որ իր նկատմամբ «…կիրառված իրավական նորմերը ակնհայտորեն չեն բավարարել իրավական որոշակիության պահանջները», ինչի արդյունքում, ըստ դիմողի, խախտվել է իր սեփականության իրավունքը, որի իրացումը շարունակաբար խոչընդոտվում է՝ իր գույքն օրենքով սահմանված կարգով մաքսազերծելու անհնարինության պատճառով, եւ որ վիճարկվող դրույթների անհստակ, ոչ որոշակի ձեւակերպված լինելը հակասում է ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածի պահանջներին:

2. Ելնելով դիմումի եւ կից փաստաթղթերի ուսումնասիրությունից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 եւ 69-րդ հոդվածների պահանջներով՝ դատական կազմը գտնում է, որ վերոհիշյալ անհատական դիմումի հիման վրա գործի քննության ընդունումը ենթակա է մերժման հետեւյալ պատճառաբանությամբ.

ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ սահմանադրական դատարան կարող են դիմել՝ յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները եւ վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը: Միաժամանակ, ՀՀ Սահմանադրության վերոհիշյալ հոդվածն օրենքին է վերապահել սահմանադրական դատարան դիմելու կարգի սահմանումը: Այն իր կոնկրետացումն է ստացել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում, որում սահմանված են ֆիզիկական եւ իրավաբանական անձանց դիմումների ընդունելիության պայմանները:

Դիմումի եւ կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում է, որ դիմողի կողմից վիճարկվող՝ ՀՀ մաքսային օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասի, 86-րդ հոդվածի, 128-րդ հոդվածի 1-ին մասի, 134-րդ հոդվածի եւ 96-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները վերջնական դատական ակտով չեն կիրառվել իր նկատմամբ: Հետեւաբար, ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների խախտմամբ գործը քննության ընդունվել չի կարող:

Միաժամանակ, սահմանադրական դատարանի դատական կազմը հարկ է համարում նշել, որ դիմողի կողմից վիճարկվող դրույթներից՝ ՀՀ մաքսային օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասի եւ 96-րդ հոդվածի 2-րդ մասի սահմանադրականության վերաբերյալ առկա է ՀՀ սահմանադրական դատարանի որոշումը (ՍԴՈ-1176, 02.12.2014թ.):

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 եւ 69-րդ հոդվածներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

Քաղաքացի Անուշ Հովհաննիսյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

22 դեկտեմբերի 2014 թվականի
ՍԴԴԿՈ/1-23